

Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանի ելույթը՝ Համահայկական 6-րդ խաղերի բացմանը

Բարի երթ մաղթելով դեպի համահայկական 6-րդ խաղեր՝ Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանն իր ելույթում նշեց. «1999 թվականից սկիզբ առած եւ շարունակվող Համահայկական խաղերն այսօր առավել հավակնոտ նպատակներ են դնում համայն հայության առջեւ՝ ազգահավաքման, հայոց պետականության շուրջ համախմբվելու, հայոց հայրենիքը վերակերտելու եւ հզորացնելու գերագույն նպատակներ: Այն, որ տարեցտարի Համահայկական խաղերը դառնում են ավելի ընդգրկուն, ավելի բազմաբովանդակ, խոսում է այն մասին, որ հեռու չէ Համահայկական իղծերի իրականացման օրը, որ մենք գտել ենք հայ ժողովրդի միաբանության հաստատման ճանապարհներից մեկը:

Շնորհավորում եմ բոլորիս Համահայկական խաղերի բացման առթիվ, մաղթում խաղաղ երկինք, տոնական տրամադրություն, հաղթանակի սպասումներով ու բերկրանքով լի օրեր, մարզական ու անձնական նվաճումներ»:

Վարդենիս քաղաքում ամառային 6-րդ խաղերի մեկնարկի առթիվ տեղի ունեցած հանդիսավոր արարողությունից հետո ջահակիրները եւ պատանի մարզիկները ուղեւորվեցին Տավուշի մարզ: Իսկ տոնակատարությունը Վարդենիսում շարունակվեց: Համահայկական ամառային 6-րդ խաղերի ջահի վառման մեկնարկի հանդիսավոր արարողությունը տեղի է ունեցել Մայիսի 9-ին, Շուշիի Սուրբ Ղազանչեցոց եկեղեցու խորանում՝ Արցախի թեմի առաջնորդ, Արքեպիսկոպոս Պարզեւ Սրբազանի հաղիսապետությամբ, մեծ տոնակատարությամբ: Նշենք, որ Համահայկական ամառային 6-րդ խաղերի ջահի վառման պաշտոնական արարողությունը լինելու է հատուկ տոնակատարություն: Ջահը կանցնի հայաշատ մի շարք քաղաքներով եւ օգոստոսի 2-ին կհասնի համայն հայության մայրաքաղաք Երեւան՝ ազդարարելով՝ Համահայկական ամառային 6-րդ խաղերի մեկնարկը: